

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

### ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՌԼՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Իտալացի կոմպոզիտոր, իտալական վիպաշտական ոպերային դպրոցի ներկայացուցիչ, *bel canto* արուեստի վարպետ, երաժշտական թատրոնի փայլուն գիտակ, Գաետանոյ Դոնիցետոսին (1797-1848) Վինչենցոյ Բելլինիի մահից յետոյ (1835) գլխաւորեց իտալական օպերային դպրոցը (Զոռակինոյ Ռոսսինին օպերային կոմպոզիտորի իր կարիերան աւարտել էր դեռեւ 1829ին՝ «Վիլիելմ Թելլ»-ով): Հնդկուած մինչեւ 1840-ականների կէսերը, մինչ Վերդիի առաջին յաղթարշաւը նա, իրաւամբ, համարում էր ազգային երաժշտական թատրոնի անգերազանցելի վարպետն ու խոշորագոյն հեղինակութիւնը:

Դոնիցետոսիի հեղինակած 74 օպերաներից մեզ՝ հայերիս համար, առաւել թանկ ու հոգեհարազատ է «Պողիկտոսը», որի իրադարձութիւնները ծաւալում են Գ. Դարում, Հայաստանում: Աւելորդ չենք համարում նկատել, որ Դոնիցետոսիի աւագ եղբայրը՝ իտալացի դիրիժոր, մանկավարժ ու կոմպոզիտոր Զուզեպպէ Դոնիցետոսին (1788-1856) 1828 թուականին իրավիրուել էր Կ. Պոլիս եւ նշանակուել սուլթանական արքունիքի գլխաւոր երաժշտական դեկավար, երաժշտութիւն դասաւանդել տեղի երաժշտներին, կազմակերպել Թուրքիայում եւրոպականացուած առաջին զինուորական նուագախումբը: Գաետանոյ Դոնիցետոսին «Պողիկտոս» ստեղծել է ֆրանսիացի դրամատուրգ Պիեռ Կոռնելի (1606-1684) «Պոլիեւլս» ոլրերգութեան հիման վրայ, որը գրուել է 1641-42 թուականներին: Պիեսի հիմքում ընկած են 16րդ դարի

թիւզանդացի պատմաբան Միմէռն Մետաֆրասթէսի «Վարք սրբոց» աշխատութիւնը եւ կարդինալ Յեղար Պարոնիուսի «Եկեղեցական նորերը»: Ըստ Կոռնելի, «Պողիկտոսը ապրել է 205 թուականին, հայ էր... նա պատուեց կայսեր հրամանը, փշրեց կուուերի արձանները, որոնք, հայերի կողմից պաշտուելու համար զետեղում էին պատուանդանների վրայ... Զանալով իր կնոց պաղատանքներին, աներոց խնդրանին՝ վերդառնալ հնոց հաւատքին», Պողիկտոսը ընդունեց քրիստոնէութիւնը, ենթարկուեց հետապնդումներին եւ, ի վերջոյ, տանջամահ արուեց հէնց աներոց կողմից: Իրադարձութիւնները ծաւալուել են Միլետա՝ մեզ յայտնի Մալարիա քաղաքում:

Դոնիցետոսին օպերան գրեց 1838ին. մէկ տարի անց գրաքննութիւնն արգելեց «Պողիկտոսը»՝ կոմպոզիտորը մեկնեց Փարիզ: Փարիզում, 1840ին, *Grand-Opera*-յում թեմադրուեց օպերան՝ «Նահատակները» (*Les Martyrs*) վերնագրով, նոր խմբագրութեամբ: Հայրենիքում «Պողիկտոսը» թեմադրուեց միայն 1848ին՝ նէապոլի «San Carlo» թատրոնում:

Իտալական պրեմիերայից 130 տարի անց (1978), Խորհրդային Միութեան ժողովրդական արտիստուիթ Գոհար Գասպարեանի խնդրանօֆ Ամենայն Հայոց Կարողիկոս Ն.Ս.Օ.Ս.Ս. Վազգէն Առաջինը «Պողիկտոսի» պարտիտուրը ստանալու նպատակով բանակցութիւններ է սկսում իտալական նոտային գրադարանի հետ: Շուտով պարտիտուրը հասնում է Հայաստան:

1993 թուականի յուլիսի 17ին երեւանի Ալ. Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի թատրոնում Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական արտիստ Տիգրան Լեւոնեանի թեմադրութեամբ տեղի ունեցաւ «Պողիկտոսի» հայկական պրեմիերան՝ ձօնուած Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հոչակելու 1700 ամեակին: Վերածնուեց «Պողիկտոսը» հէնց հայոց հողում: 1996ին Հայկական մշակոյթի օրերի շրջանակներում Դոնիցետտիի սակաւ յայտնի այս օպերան ներկայացուեց Մոսկուայի «Մեծ թատրոնում», որին յաջորդեցին օպերային թատրոնի հիւրախաղերն իսպանիայում 1998ի ամրանը. Դասական արուեստի միջազգային հնագոյն անտիկ ամֆիթատրոնի տարածում 2 օր անընդմէջ ներկայացուեց «Պողիկտոսը»: Մամուլի գնահատմամբ «ներկայացումը դարձաւ փառատօնի մեծ աստղը»:

Օպերայի լիրքետոյի հեղինակն էր Սալվատորէ Կամմարանոն. նրա անուան հետ էր կապուած Դոնիցետտիի լաւագոյն գործերից մէկի՝ «Լուչիա դի Լամբերտո» օպերայի ստեղծումը, որը թեմադրուեց 1835ին նէապոլում: Յատկանշական է, որ լիրքետիստ Կամմարանոն համագործակցել է նաև Վերդիի հետ. համագործակցութեան շնորհիւ լոյս աշխարհ եկան «Ալզիրա» (1845, Նէապոլ, San Carlo), «Ճակատամարտ Լենյանոյի մօու» (1849, Հոնժ, Argentina), «Լուիզա Միլեր» (1849, Նէապոլ, San Carlo) օպերաները: Վերդիի եւ Կամմարանոյի վերջին համատեղ աշխատանքը «Տրուքադուրն» էր, որի ստեղծումը ձգձգուեց Լերքետիստի հիւրանդութեան պատճառով. անաւարտ բողնելով լիրքետոնն՝ Կամմարանոն յանկարծամահ եղաւ 1852ի ամրանը:

«Տրուքադուրը» թեմադրուեց Հռոմում 1853ին: Պատահականութիւն էր արդեօֆ, թէ՝ զուգադիպութիւն, որ 1864թ. օգոստոսին Պետերրուրգում լոյս տեսաւ օպերայի հայերէն կլակիրը՝ Ցովհաննէւս Սահրատեանի թարգմանութեամբ: Միքայէլ Նալբանդեանի շնորհիւ (նա էր խորհուրդ տուել Սահրատեանին թարգմանել օպերան եւ հետամուտ եղել մինչեւ վերջ) երեւան եկաւ հայկական առաջին թարգմանչական օպերան՝ իր պրեմիերայից ընդամէնը 11 տարի անց:

1859ին, յընթացս եւրոպական իր շրջագայութեան, Մայնի Ֆրանկֆուրտում Միքայէլ Նալբանդեանը (1829-1866) գրում է «Խտալացի աղջկայ երգը» բանաստեղծութիւնը՝ ձօն առ խտալական ժողովրդի ազատագրական պայքարը: Խտալացիներն իրենց ազգային դրօշը պարզած՝ նետում են մարտի դաշտ, կործանելու աւստրիական շղթաները: Խտալիայի ազատագրումը ձեռք է բերում նրա որդիների արեամբ, եւ բանաստեղծը երազում է այն պահը, երբ նրանց խանդավառութեան կէսը կամ գոնէ կէսի կէսը՝ կ'երեւար եւ հայերի մէջ: Նա կշտամբում է հայերին եւ խաչական միաժամանակ.

Ամենայն տեղ մահը մի է, Մարդ մի անգամ պիտ մեռնի. Բայց երանի, որ իւր ազգի Ազատութեան կը զոհուի:

Խտալական ազատագրական շարժումները հնարաւորութիւն տուեցին բանաստեղծին՝ իր ժամանակակիցներին եւ հետագայ սերունդներին հաղորդել ազգային-ազատագրական պայքարի այս պայծառ աւանդը:

Յատկանշական է, որ այս բանաստեղծութիւնն էլ ընկած է ներկայիս Հայաստանի հանրապետութեան պետական օրիներգի հիմքում: 1907ի յուլիսին Կոմիտասն (1869-1935)

**Արշակ Չօպանեանի ընկերակցութեամբ այցելում է Սուրբ Ղազար՝ Վենետիկի ձեռագրատանը մասնագիտական ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով։ Միիրարեան միարանութեան դահլիճում եւ Մուրատ-Ռափայէլեան վարժարանում Կոմիտասը դասախոսութիւններ է կարդում հայ ժողովրդական- եկեղեցական երաժշտութեան մասին՝ զուգահեռարար երգերի կատարմամբ հաստատելով իր տեսական դրոյթները։ Բանախօսութիւններից ստացուած հիացական տպաւորութիւնները զետեղուել են «Քազմավէպի» յուլիս-օգոստոսի համարում «հայկական երաժշտութիւնն ի Վենետիկ» վերտառութեամբ յօդուածում։**

**Զ. Վերդիի մահուան քօթից ցնցուած Կոմիտասը գրում է «Յովսէփ Վերդի» յօդուածը (1904, «Տարագ», Թիֆլիս)՝ տալով մարգարէական**

գնահատականներ։ «Վերդին ոչ միայն անցեալի երաժիշտ է, այլեւ ապագայի։ Նա նուազերգութեան պատմութեան մէջ գրաւում է մի ընդարձակ տեղ»։ «Վերդին մեռաւ։ Խոալական երաժշտութիւնն անժառանգ մնաց», - եզրափակում է իր յօդուածը Կոմիտասը։

Յաւարտ խօսքիս փափաքում եմ, որ դարերի պատմութիւն ունեցող հայ իտալական երաժշտական կապերը հետզհետէ էլ աւելի սերտանան ու ամրանան, քանզի բազում են ընդհանրութիւնները մեր եղբայրական ժողովուրդների ճակատագրում, պատմութեան մէջ եւ մշակոյթում։ Լիայիս եմ, որ դեռ մենք բազում առիթներ կ'ունենանք համատեղ մշակութային ծրագրերի իրականացման, քազմաշերտ, եւ քազմաքնոյթ համագործակցութեան համար։

### ԱՆՆԱ ԱՍԱՏՐԵԱՆ